ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունիսի 2023 թվականի N 141-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՔԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԻՋՃԱՄԲԱՐԱՅԻՆ ՄԵԿՈՒՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մայիսի 19-ի N 541-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. *2023 թվականի հուլիսի 1-ից* առողջարարական ճամբարներում հանգստացող երեխաների շուրջօրյա անխափան և որակյալ բժշկական օգնություն և՝ սպասարկում կազմակերպելու նպատակով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին հանձնարարել՝

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Հանքավան գյուղի տարածքում գտնվող միջճամբարային մեկուսարանի շուրջօրյա աշխատանքները իրականացնելու նպատակով վերանայել տարածքի կահավորումը և ժամանակավորապես տրամադրել ՖՈՐԴ 847 SU 42 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, որի շուրջօրյա անխափան աշխատանքների իրականացման համար ապահովել վառելիքով,

2) *2023 թվականի հուլիսի 1-ից օգոստոսի 8-ը* ներառյալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի Հանքավան գյուղի տարածքում գտնվող միջճամբարային մեկուսարանում աշխատելու նպատակով գործուղել ընկերության համապատասխան աշխատողներին՝ մեկ բժիշկ *(մանկաբույժ կամ ընտանեկան բժիշկ)* և մեկ բուժքույր, գործուղման ծախսերը վճարել Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան, ապահովել Հանքավանի միջճամբարային մեկուսարանը առաջնային բժշկական օգնության անհրաժեշտ դեղորայքով և բժշկական պարագաներով:

2. Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ *Անուշ Ղահրամանյանի* վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2023 թվականի հունիսի 08
ք. Հրազդան